Հարցաթերթ
Աշխարհագրություն առարկայի օլիմպիադա
դպրոցական փուլ – 2023-2024 ուս. տարի
(տևողությունը – 90 րոպե)
9 – րդ դասարան

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

1. Հայկական լեռնաշխարհի նշված գետերից ո՞րն է Կուր գետի ամենախոշոր վտակը
1. Խրամի 2. Թարթառ 3. Արաքս 4. Արածանի

2. ՀՀ հողատեսակներից ո՞րն է առավել ձևափոխվել մարդու ազդեցությամբ
1. սևահող 2. գորշ կիսաանապատային
3. շագանակագույն 4. մարգագետնատափաստանային

3. ՀՀ ազգային փոքրամասնություններից ո՞րն է բնակեցնում առավել բարձրադիր շրջանները
1. ռուսներ 2. ասորիներ 3. հույներ 4. եզդիներ

4. Խորշակները Հայկական լեռնաշխարհին բնորոշ են՝
1. գարնանը 2. ամռանը 3. աշնանը 4. ձմռանը

5. Պլատֆորմների եզրային ճկվածքներին բնորոշ է՝
1. ոսկին 2. նավթը 3. գրանիտը 4. պղինձը

6. Հարավային, Հյուսիսային, Կուկի, Օքլենդ: Տվյալ տեղանունները միաժամանակ կարելի է հանդիպել՝
1. Պապու Նոր Գվինեայում 2. Նոր Զելանդիայում
3. Ավստրալիայում 4. Մեծ Բրիտանիայում

7. Քարտեզի պայմանական նշանների համակարգը կոչվում է՝
1. լեգենդ 2. ազիմուտ 3. աստիճանացանց 4. գեոիդ

8. Ցեխահոսքերի հավանականությունը Հնդկաստանում առավել մեծ է՝
1. դեկտեմբեր-փետրվարին 2. մարտ-մայիսին
3. հունիս-օգոստոսին 4. սեպտեմբեր-նոյեմբերին

9. Բացարձակ միապետությունների մեծ մասը կենտրոնացած է՝
1. Հարավարմտյան Ասիայում 2. Հարավարևելյան Ասիայում
3. Հյուսիսային Աֆրիկայում 4. Արևմտյան Եվրոպայում

10. Կանանց նկատմամբ տղամարդկանց թվի գերակշռությունը բնորոշ է՝
1. Էստոնիային 2. Բանգլադեշին 3. Եթովպիային 4. Վրաստանին

11. Միաժամանակ երկու օվկիանոսներ ելք չունեցող երկիր է՝
1. Սալվադոր 2. Նիկարագուա 3. Եգիպտոս 4. Թաիլանդ

12. Բնակչության ամենաերիտասարդ կազմ ունեցող երկիրն է՝
1. Սաուդյան Արաբիա 2. Նիգեր 3. Չինաստան 4. Ալժիր

13. Հունիսի 22-ին ո՞ր աշխարհագրական լայնությունն է արևից ավելի շատ ջերմություն ստանալու, եթե ամպամածություն չլինի:
1. Հյուսիսային լայնության $20,5^0$ 2. Հյուսիսային լայնության $21,5^0$
3. Հյուսիսային լայնության $24,5^0$ 4. Հյուսիսային լայնության $25,5^0$

14. Երկու լեռնագնաց բարձրանում են միևնույն լեռը: Նույն պահին, երբ առաջին լեռնագնացը հաղորդեց, թե իր մոտ ջերմաստիճանը +12°C է, երկրորդը հաղորդեց, որ իր մոտ +18°C է: Որքա՞ն է նրանց միջև հարաբերական բարձրությունը:
1. 0.5կմ 2. 1կմ 3. 1.5կմ 4. 2կմ

15. Հորիզոնի ո՞ր կողմում պետք է տեղակայվի մթնոլորտն աղտոտող ձեռնարկությունը



1. Հս. արմ 2. Հվ. արլ 3. Հս 4. Հվ

Կարճ պատասխանով առաջադրանքներ

16. Գետի ծախսը 15մ^3/վրկ է, իսկ արագությունը՝ 0.5մ/վ: Քանի մետր է գետի միջին խորությունը այդ հատվածում, եթե լայնությունը 30մ է:

17. Որքա՞ն է Հրազդան գետի թեքությունը Սևանա լճից Արգելի ՀԷԿ հատվածում՝ արտահայտած մ/կմ չափման միավորով, եթե Արգելի ՀԷԿ-ի բացարձակ բարձրությունը 1400մ է, իսկ գետի երկարությունը այդ հատվածում՝ 50կմ:

18. Ա երկրի երկաթի պաշարները կազմում են 2մլն տ, իսկ տարեկան արդյունահանումը՝ 100հզ տ: Որքա՞ն է Ա երկրի ապահովվածությունը երկաթի պաշարներով:

19. Ա երկրի բնակչության թիվը 10մլն մարդ է: Մեկ տարի անց այն ավելացել է 50հզ-ով: Այդ ընթացքում երկիր է ներգաղթել 20հզ և արտագաղթել է 10հզ մարդ: Քանի՞ պրոմիլ է կազմել բնական աճը այդ ժամանակահատվածում:

20. Օրվա ընթացքում գրանցված ջերմաստիճաններն են -4; -1; +1; +3; +5; +7; +4; 0: Որքա՞ն է ջերմաստիճանների տատանման լայնույթը:

Առարկայական հանձնաժողովի նախագահ՝ **Վարդան Ասատրյան**